ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության նախագահի
2024 թվականի նոյեմբերի 12 -ի
N 148 -Լ կարգադրությամբ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանում	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրինության Պրոդուկտների մշակման բաժին
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	01/12/2024
Տարածում	«ԱյԴի Բանկ» ՓԲԸ բոլոր ստորաբաժանումներ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդներ
Այլ դրույթներ	Սույն կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում 2024 թվականի ապրիլի 3-ի N 36-Լ կարգադրությամբ հաստատված «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների բացման և սպասարկման» կանոնները
Առնչվող փաստաթղթեր	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ 3
ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ԳԼՈՒԽ 4.ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 9
ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ 14
ԳԼՈՒԽ 6. ՀԱՇՎԻ ՓԱԿՄԱՆ ԿԱՄ ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ 17
ԳԼՈՒԽ 7. ՀԵՌԱՎԱՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 19
ԳԼՈՒԽ 8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 22
ԳԼՈՒԽ 9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 23
ԳԼՈՒԽ 10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) 23
ԳԼՈՒԽ 11. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ 23
ԳԼՈՒԽ 12. ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 25
ԳԼՈՒԽ 13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 26

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:

Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ

1.Սույն կանոնների նպատակն է սահմանել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար բանկային հաշվի բացման, վարման, սպասարկման, դրամական միջոցների պահպանման և սույն կանոններով նախատեսված հաշվարկային գործառնությունների կազմակերպման և իրականացման ընդհանուր պայմանները:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2.Սույն կանոններում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.

1) **Բանկ**՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ,

2) **Կանոններ՝** իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններ,

3) **Հաճախորդ**՝ ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ (այդ թվում՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, իրավաբանական անձանց կողմից ստեղծված մասնաճյուղ, ներկայացուցչություն, հիմնարկ և այլ առանձնացված ստորաբաժանում), անհատ ձեռնարկատեր,

4) **Ոչ ակտիվ հաճախորդ՝** Հաճախորդ, ով օգտվում է Բանկի ծառայություններից, վերջին մեկ տարվա ընթացքում չի կատարել առնվազն 1 (մեկ) գործարք (այդ թվում՝ քարտային հաշվի միջոցով) և վերջինիս բոլոր հաշիվների մնացորդների հանրագումարը (այդ թվում՝ քարտային հաշիվների) փոքր է 100, 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամին համարժեք գումարից (արտարժույթի հաշիվների դեպքում հաշվարկի համար հիմք է ընդունվում հաշվարկման պահին Բանկի կողմից սահմանված տվյալ արժույթի վաճառքի փոխարժեքը), բացառությամբ այն Հաճախորդների, որոնք Բանկում ունեն ավանդ (այդ թվում՝ նաև պարտատոմս), վարկային պարտավորություններ (այդ թվում՝ նաև տրված երաշխավորություններ) կամ օգտվում են Բանկի կողմից մատուցվող այլ ծառայություններից,

5) **Հաշիվ՝** բանկային հաշիվ,

6) **Օֆերտա՝** Հաճախորդի կողմից ներկայացված Հաշվի բացման և սպասարկման դիմում - հայտ (օֆերտա),

7) **Ակցեպտ՝** Հաճախորդի կողմից ներկայացված Օֆերտայի՝ Հաշվի բացման և սպասարկման դիմում – հայտի ընդունումը հավաստող փաստաթուղթ,

8) **Պայմանագիր՝** Հաշվի բացման և սպասարկման դիմում – հայտը (օֆերտան) և Հաշվի բացման և սպասարկման դիմում – հայտի ընդունում (ակցեպտ) փաստաթղթերը միասին հանդիսանում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված Հաշվի բացման և սպասարկման պայմանագիրը,

9) **Սակագին՝** Հաճախորդների համար հաստատված սակագներ/տեղեկատվական

ամփոփագրեր, պայմաններ,

10) **Բանկային օր (Աշխատանքային օր)՝** Հայաստանի Հանրապետությունում հանգստյան (շաբաթ, կիրակի) և/կամ ոչ աշխատանքային (տոնական կամ հիշատակի) օր չհանդիսացող օրվա ժամը 9:15-ից մինչև ժամը 16:45-ն ընկած ժամանակահատված, բացառությամբ Բանկի կողմից սահմանված առանձին դեպքերի (երկարացված Բանկային օր կամ կարճ Բանկային օր):

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.Սույն Կանոններով կարգավորվում են Բանկում Հաճախորդների կողմից Հաշվի բացման, սպասարկման և սույն Կանոններով նախատեսված հաշվարկային գործառնությունների կազմակերպման և իրականացման պայմանները:

4.Բանկը Հաճախորդի կողմից ներկայացրած Օֆերտայի հիման վրա Հաճախորդի համար բացում է Հաշիվ և պարտավորվում է այդ Հաշիվը սպասարկել, և հաշվարկային գործառնություններն իրականացնել Կանոնների և Սակագների համաձայն, իսկ Հաճախորդը պարտավորվում է պահպանել դրանք և իրականացնել բոլոր գործողությունները, որոնք ուղղված են դրանց կատարմանը, այդ թվում՝ Բանկի պահանջով ներկայացնել Հաշիվների բացման և սպասարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը:

5.Բանկը՝ Հաճախորդի Հաշիվը բացում է Հաճախորդի կողմից պատշաճ կարգով և ամբողջական լրացված Օֆերտան և անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջությամբ Բանկ ներկայացնելու դեպքում՝ նույն Բանկային օրվա ընթացքում:

6.Հաճախորդի կողմից ներկայացված Օֆերտան և Հաշվի բացման և սպասարկման հետ կապված փաստաթղթերը կարող են Հաճախորդի կողմից ստորագրվել էլեկտրոնային ստորագրություն դնելու միջոցով, ինչպես նաև Բանկի կողմից Հաճախորդին տրամադրվող/ուղարկվող փաստաթղթերը, այդ թվում՝ Պայմանագրեր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր կարող են Հաճախորդին տրամադրվել/ուղարկվել Բանկի իրավասու անձի էլեկտրոնային ստորագրությամբ և Բանկի էլեկտրոնային կնիքով:

7.Բանկի այն Հաճախորդները, որոնք արդեն իսկ Բանկում ունեն գործող Հաշիվ կամ գործող վճարային քարտ, կարող են Բանկ-հաճախորդ համակարգով (IDBusiness համակարգ) կամ Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեով ուղարկել հաղորդագրություն՝ Հաշվի բացման վերաբերյալ, որը Բանկը կդիտարկի որպես Հաճախորդի կողմից պատշաճ ներկայացած Օֆերտա՝ հղումով: Սույն կետով նախատեսված եղանակով ներկայացված նոր Հաշվի բացման առաջարկը ենթադրում է առաջարկ ներկայացրած անձի կողմից Հաշվի բացման, վարման և սպասարկման բոլոր պայմաններին ու սակագների հետ համաձայնություն, ինչպես նաև Հաճախորդի անունից առաջարկը ներկայացրած ֆիզիկական անձի անձնական տվյալների մշակմանը համաձայնության տրամադրում: Օֆերտան Բանկի կողմից ակցեպտավորելու դեպքում Ակցեպտն ուղարկվում է

էլեկտրոնային եղանակով՝ Հաճախորդի՝ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին և Հաշվի պայմանագիրը համարվում է պատշաճ կնքված:

8.Բանկը, առանձին դեպքերում, իրավունք ունի հաշիվ բացել Հաճախորդի նույնականացման փաստաթղթերի (օրինակ՝ Հաճախորդի գրանցման վերաբերյալ փաստաթղթի) բացակայության կամ թերի լինելու դեպքում: Նման պարագայում Բանկը չի ընդունում Հաճախորդի հաշվից դրամական միջոցների ելքագրման հանձնարարականներ, քանի դեռ ամբողջականորեն չեն ներկայացվել Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը և/կամ փաստաթղթերը: Հաճախորդի կողմից փաստաթղթերը 7 (յոթ) Աշխատանքային օրվա ընթացքում չհամալրելու դեպքում՝ Հաշիվն անմիջապես ենթակա է փակման, իսկ տվյալ Հաշվին մուտքագրված գումարը՝ հետ վերադարձման Հաճախորդին, իսկ այն դեպքում, երբ նշված գումարը հաշվին մուտքագրված է ավտոմատ գանձման մեքենայի միջոցով, ապա Հաճախորդը կարող է այն ստանալ՝ մոտենալով Բանկի ցանկացած մասնաճյուղ: Ընդ որում, սույն կետով նախատեսված կարգավորումները գործում են՝ հաշվի առնելով նաև սույն Կանոնների 42-44-րդ կետի պահանջները:

9.Բանկը Հաճախորդի Հաշիվ բացելը հավաստում է Ակցեպտ նամակի միջոցով, որն ուղարկվում, է Հաճախորդի Օֆերտայում նշված էլեկտրոնային փոստին (Էլեկտրոնային եղանակով Հաճախորդին ուղարկելուց բացի, Հաճախորդի ցանկության դեպքում կարող է տրամադրվել նաև առձեռն):

10. Հաշվի Պայմանագիր ստորագրելով (կնքելով), կամ արդեն իսկ Բանկում գործող Հաշիվ ունեցող Հաճախորդի կողմից Բանկ-հաճախորդ համակարգի կամ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի միջոցով նոր Հաշվի բացման առաջարկ/հաղորդագրություն ուղարկելով Հաճախորդը՝

1) հաստատում է իր կողմից Բանկին տրամադրած տեղեկությունների արժանահավատությունը և պարտավորվում է 5 (հինգ) Աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Բանկին տրամադրված տվյալների ցանկացած փոփոխության մասին,

2) հայտնում է, որ մտադիր է իր կողմից «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին հայտնվող, բացահայտվող, տրամադրվող, ինչպես նաև իր և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի միջև ծագող իրավահարաբերությունների ընթացքում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից իր վերաբերյալ որևէ անձից ստացված կամ որևէ տարբերակով հավաքագրված, մշակված ցանկացած տեղեկատվություն գաղտնի պահել երրորդ անձանցից, ուստի խնդրում է վերոնշյալ տեղեկատվությունը դիտարկել որպես «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն,

3) Հաճախորդի օրինական ներկայացուցիչը գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից կարող են ազդել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից կայացված որոշումների վրա: Միաժամանակ՝ Հաճախորդը և/կամ իր օրինական ներկայացուցիչը հավաստում է, որ

ա. ծանոթ է ՀՀ քրեական օրենսգրքի 295-րդ (Հանցավոր ճանապարհով ստացված գույք ձեռք բերելը, իրացնելը կամ իրացմանն աջակցելը), 296-րդ (Փողերի լվացումը), 309-րդ (Ահաբեկչական գործունեությանը նպաստելը) և 310-րդ (Ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելը) հոդվածների բովանդակությանը, գիտակցում է դրանց իմաստն ու էությունը, և որ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք կփոխանցվեն Օֆերտայի հիման վրա բացվող հաշվով (հաշիվներով), ստացված կլինեն օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն լինի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ: Անհրաժեշտության դեպքում Հաճախորդի անունից պատրաստ է Բանկին տրամադրել տեղեկություններ (հիմնավորող փաստաթղթեր) կատարվող ցանկացած գործարքի մասին,

բ. գիտակցում և ընդունում է, որ Օֆերտայի հիման վրա Հաշվի բացման համար Բանկը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ,

գ. տեղեկացված է, որ Օֆերտայով նախատեսված բոլոր տեղեկությունների հետագա թարմացման պարտավորությունը կրելու է Հաճախորդը/ հաշվետերը,

դ. Բոլոր ծանուցումները կհամարվեն պատշաճ ուղարկված, եթե դրանք ուղարկված լինեն Օֆերտայում նշված/Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեով՝ միաժամանակ Հաճախորդը պարտավորվում է հասցեի փոփոխության դեպքում այդ մասին 5 (հինգ) օրվա ընթացքում տեղեկացնել Բանկին և կրում է չտեղեկացման հետ կապված բացասական ռիսկը:

11. Սույն Կանոնները, Սակագները, ինչպես նաև Հաշվի բացման և սպասարկման հետ կապված այլ փաստաթղթերը հաստատվում են Բանկի կողմից և կարող են միակողմանիորեն փոփոխվել/լրացվել:

12. Արդեն իսկ Բանկում գործող Հաշիվ ունեցող Հաճախորդից, Բանկ-հաճախորդ համակարգով ստացված և ուղարկված հանձնարարականները, հաղորդագրությունները, դիմումներն ու փաստաթղթերը (օրինակ՝ համաձայնագիր, հարցաթերթիկներ, լիազորագրեր, օֆերտաներ և այլն), համարվում են պատշաճ ներկայացած և ունեն նույն իրավաբանական ուժը, ինչ Հաճախորդի և/կամ Բանկի համապատասխան իրավասու աշխատակցի ձեռագիր ստորագրությունը և վերջիններիս կողմից Բանկ-հաճախորդ համակարգով ստացած, և ուղարկված փաստաթղթերը առաջացնում են տվյալ փաստաթղթի բովանդակությունից բխող բոլոր իրավական հետևանքները: Սույն դրույթը վերաբերում է նաև Հաճախորդի Բանկում գրանցված էլեկտրոնային փոստով իրականացվող նամակագրությանը/փաստաթղթաշրջանառությանը, բացառությամբ վճարման հանձնարարականների ներկայացման դեպքերի, եթե վճարման հանձնարարականը չի վերաբերում Հաճախորդի հաշիվների միջև իրականացվող գործարքներին: Ընդ որում, այն դեպքում, երբ Հաճախորդի կողմից ներկայացված դիմումով հայցվող ծառայությունը իրենից ներկայացնում է Բանկի կողմից սահմանված սակագների հիման վրա՝ վճարովի ծառայություն, ապա նշված ծառայության գինը ենթակա է գանձման սույն Կանոնների 19-րդ կետում նշված կարգով: Հաճախորդի Հաշիվներին համապատասխան գումարի բացակայության դեպքում ծառայությունը

ենթակա չէ մատուցման:

13. Բանկ-հաճախորդ համակարգով Հաշիվների բացման, սպասարկման և դրանցով գործառնությունների իրականացման այլ հարցերը կարգավորվում են սույն Կանոններով, Սակագներով, Բանկի և Հաճախորդի միջև կնքված Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրման և սպասարկման պայմանագրով, ինչպես նաև Բանկի այլ իրավական ակտերով:

14. IDBusness Mobile հավելվածով Հաշիվների բացման, սպասարկման և դրանցով գործառնությունների իրականացման այլ հարցերը կարգավորվում են սույն Կանոններով, Սակագներով, Բանկի Կորպորատիվ հաճախորդների հեռահար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններով, ինչպես նաև Բանկի այլ իրավական ակտերով:

15. Սույն կանոնները տարածվում են նաև վճարային քարտերի բացման և սպասարկման, այդ թվում՝ փաթեթային պրոդուկտների (փաթեթ, որի մեջ մտնում է Բանկի կողմից միաժամանակ մատուցվող՝ մեկից ավելի ծառայություն), վրա այնքանով, որքանով չեն հակասում տվյալ պրոդուկտի/ծառայության գծով հրապարակված տեղեկատվական ամփոփագրերին և կանոններին:

16. Հաճախորդի կողմից իրականացվող բոլոր գործարքները ստորագրվում են համապատասխան իրավասություն ունեցող անձի կողմից և դրվում է կնիք, Հաճախորդի կանոնադրությամբ կամ Հաճախորդի ներքին իրավական ակտերով կնիք դնելու պահանջի առկայության դեպքում, ինչի մասին Հաճախորդը տալիս է հայտարարություն: Հաճախորդի ներքին փաստաթղթերով գործարքների նկատմամբ կնիքի պարտադիր պահանջ նախատեսված լինելու դեպքում, Հաճախորդի կողմից Բանկում իրականացվող գործարքները չկնիքելու (փաստաթղթերի վրա կնիքը չդնելու) և կեղծ հայտարարություն տալու հետ կապված բոլոր ռիսկերը կրում է Հաճախորդը:

17. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ իր անունից կամ իր տվյալների տրամադրմամբ այլ անձանց իր անունից, կամ իր փոխարեն կամ իր հաշիվներով գործարք կատարելու հնարավորության ընձեռումը (այդ թվում՝ հաշվի համալրման հնարավորության տրամադրումը) համարվում է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին տվյալ անձին ծանոթանալու համաձայնության տրամադրում:

18. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը առ այն, որ իր կողմից ներկայացրած վճարման հանձնարարականը կատարելիս, Բանկը, անհրաժեշտության դեպքում, Հաճախորդի կողմից կատարվող գործարքի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև այլ տվյալներ տրամադրի գործարքի իրականացմանը մասնակցող կողմերին (օրինակ՝ միջնորդ բանկ, երրորդ բանկ և այլն), ընդ որում, նման տեղեկատվության տրամադրումը չի հանդիսանում բանկային գաղտնիքի հրապարակում:

19. Համաձայնելով սույն Կանոններին՝ Հաճախորդը գիտակցում և ընդունում է ու միաժամանակ տալիս է իր համաձայնությունն առ այն, որ՝

1) Բանկը իր կողմից մատուցած ծառայությունների դիմաց Հաճախորդի հաշիվներից անակցեպտ գանձում է միջնորդավճարներ՝ Բանկի կողմից հաստատված Սակագների համաձայն, եթե Հաճախորդի համար այլ՝ անհատական սակագին (հրապարակային սակագներից տարբերվող սակագին) սահմանված չէ: Միջնորդավճարն առաջնահերթ գանձվում է այն հաշվից, որից մատուցվում է ծառայությունը, ընդ որում, դրամական միջոցների անբավարարության դեպքում միջնորդավճարը գանձվում է դրամային հաշիվներից, իսկ դրամային հաշիվներին դրամական միջոցների անբավարարության դեպքում՝ արտարժութային հաշիվներից (ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի և այլն): Սույն կետով սահմանված կարգով գանձվում են նաև Հաճախորդի՝ Բանկի նկատմամբ գոյացած պարտավորությունների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) գումարները: Ընդ որում, Բանկն իր հայեցողությամբ իրավասու է փոփոխել հաշիվներից միջնորդավճարների գանձման հերթականությունը:

2) Բանկի նկատմամբ պարտավորությունների առկայության և Հաճախորդի բանկային հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում պարտավորությունների գումարը անակցեպտ կարգով գանձվում է Բանկի հետ կնքված վարկային պայմանագրերի շրջանակներում Հաճախորդին տրամադրված վարկային գծերի/օվերդրաֆտների չօգտագործված մասից: Հաճախորդը գիտակցում, ընդունում է, որ վարկային գծերից և օվերդրաֆտներից անակցեպտ միջոցների գանձման դեպքում կարող են առաջանալ պայմանագրով սահմանված տոկոսագումարների վճարումների պարտավորություններ:

3) Բանկն իրավունք ունի Հաճախորդի հաշիվներից անակցեպտ գանձել Հաճախորդի կողմից իրականացվող գործարքների կատարման հետ կապված երրորդ բանկերի ծախսերը՝ Սակագներով նախատեսված դեպքերում: Ընդ որում, նշված ծախսերը Բանկը կարող է գանձել գործարքի իրականացումից հետո 12 (տասներկու) ամսվա ընթացքում: Սույն կետում նշված գումարն առաջնահերթ կարգով գանձվում է այն հաշվից, որից կատարվել է գործարքը, իսկ այդ հաշվին դրամական միջոցների անբավարարության դեպքում գանձվում է Հաճախորդի մնացած հաշիվներից՝ սույն կետի 1) ենթակետում նշված կարգով: Սույն ենթակետով նախատեսված ծախսերը Բանկի կողմից Հաճախորդի փոխարեն կատարելու դեպքում Բանկը Հաճախորդի հանդեպ ձեռք է բերում պահանջի իրավունք՝ կատարած ծախսի չափով, ընդ որում, նշված պահանջը Բանկի կողմից Հաճախորդին կարող է ներկայացվել քաղաքացիական շրջանառության մեջ ընդունված ցանկացած տարբերակով: Հաճախորդը գիտակցում է, որ սույն ենթակետով նախատեսված պահանջի չկատարումը կարող է հանգեցնել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հետևանքների, այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Հաճախորդի պարտավորությունների դասակարգման: Կողմերն ընդունում են, որ սույն ենթակետով նախատեսված կարգավորումը գործելու է անկախ Կողմերի իրավահարաբերությունների փաստացի դադարեցումից:

4) Բանկը Ոչ ակտիվ հաճախորդներից վերջիններիս հաշիվների սպասարկման համար իրավունք ունի անակցեպտ կարգով գանձել միջնորդավճարներ՝ Սակագներով նախատեսված

պարբերականությամբ և չափով (առկայության դեպքում): Սույն կետով սահմանված միջնորդավճարը գանձվում է Հաճախորդի առավելագույն մնացորդն ունեցող դրամային հաշվից, իսկ հաշվի մնացորդի անբավարարության դեպքում Հաճախորդի այլ հաշիվներից՝ սույն կետի 1-ին ենթակետի համաձայն:

5) Արտարժութային հաշիվներից միջնորդավճարների գանձման դեպքում արժույթի փոխարկման համար հիմք է ընդունվում միջնորդավճարի հաշվարկման պահին Բանկի կողմից սահմանված տվյալ արժույթի վաճառքի փոխարժեքը:

20. Հաճախորդի հաշիվներից սույն Կանոնների 19-րդ կետով նախատեսված միջնորդավճարների (այդ թվում՝ երրորդ բանկի ծախսերի) գանձման համար Հաճախորդի հաշիվներին գումարների բացակայության դեպքում Հաճախորդի անունով ձևավորվում է դեբիտորական պարտավորություն: Հաճախորդի դեբիտարական պարտավորությունների դասակարգումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 4.ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

21. Բանկը հաճախորդի հաշիվներով գործառնություններն իրականացնում է վերջինիս համապատասխան հանձնարարականների հիման վրա, հաշվին առկա մնացորդի սահմաններում, եթե ՀՀ օրենսդրությամբ, այլ պայմանագրերով և/կամ համաձայնագրերով այլ բան սահմանված չէ:

22. Առանձին դեպքերում (օրինակ՝ ոչ ռեզիդենտ հաճախորդների դեպքում) Հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով Բանկն իրավունք ունի չընդունել Հաճախորդի հաշվից գումարների ելքագրման հանձնարարականներ, հանձնարարականը ներկայացնելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում, բացառությամբ Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ձեռքբերման, Բանկում ավանդ ներդնելու և Բանկում Հաճախորդի մեկ հաշվից մեկ այլ հաշվին փոխանցումների նպատակով հաշվից ելքագրման հանձնարարականների, ընդ որում սույն կետում նշված պայմանը տարածվում է Հաճախորդի՝ Բանկում գործող բոլոր հաշիվների վրա:

23. Արժույթները, որոնցով Բանկը կարող է բացել Հաշիվ, սահմանվում են Սակագներով:

24. Յուրաքանչյուր հաշիվ սպասարկում է միայն մեկ արժույթ, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի կողմից: Ստորագրելով Պայմանագիրը՝ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ հաշվին տվյալ հաշվի արժույթից տարբերվող արժույթով դրամական միջոցներ փոխանցվելու դեպքում, Բանկն իրավասու է առանց հաճախորդի լրացուցիչ համաձայնության Հաճախորդի հաշվին մուտքագրել դրան համարժեք գումար՝ հաշվարկված Բանկի կողմից անկանխիկ գործարքների համար տվյալ գործառնության իրականացման համար տվյալ պահին գործող հրապարակված փոխարժեքով:

25. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի դրամական կամ արտարժութային միջոցների օգտագործման ուղղությունների համար և չի միջամտում հաշիվներում առկա միջոցների տնօրինմանը, եթե ՀՀ օրենսդրությամբ, այլ պայմանագրերով և/կամ

համաձայնագրերով այլ բան սահմանված չէ:

26. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի հաշվին կանխիկ արտարժույթի մուտքագրման գործարքները «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» և «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքներով նախատեսված պահանջներին համապատասխանելու համար:

27. Բանկը չի միջամտում Հաճախորդի հաշիվներում առկա միջոցների տնօրինմանը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով նախատեսված սահմանափակումների կամ այլ կարգավորումների կիրառման դեպքերի:

28. Եթե Բանկի կողմից փոփոխվում է տեղեկատվական ամփոփագրով սահմանված Հաշվի սպասարկման սակագինը և Հաճախորդը չի ընտրել սպասարկման վճարի վճարման պարբերականությունը, ապա Հաշվի սպասարկման վճարը սահմանվում է Սակագներով հաստատված ամենակարճ պարբերականությանը համապատասխան (օրինակ՝ ամսական և տարեկան պարբերականությունների առկայության դեպքում սահմանվում է ամսական պարբերականությունը): Նույն սկզբունքով գանձվում են նաև այն վճարները, որոնց համար Սակագներով սահմանվում է վճարման պարբերականություն: Սույն կետում նշված պայմանը տարածվում է նաև անհատական սակագին ունեցող Հաճախորդների համար, անհատական սակագնի գործողության ժամկետի ավարտից հետո:

29. Առանձին դեպքերում, Հաճախորդի կողմից իրականացվող գործարքների նախապայմանների և նպատակի հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրության (Due diligence) անհրաժեշտություն առաջանալու դեպքում Հաշվի սպասարկման և գործարքների իրականացման համար Բանկի կողմից կարող են կիրառվել Բանկի կայքում հրապարակված Սակագներից տարբերվող պայմաններ, սակագներ/միջնորդավճարներ (Անհատական սակագին): Անհատական սակագին կարող է սահմանվել նաև սույն կետում չնշված այլ դեպքերում:

30. Անհատական սակագինը կարող է սահմանվել որոշակի ժամկետով, ընդ որում, անհատական սակագնի գործողության ժամանակահատվածում Բանկը միակողմանիորեն, առանց Հաճախորդին տեղեկացնելու (ծանուցելու), առանձին գործարքների համար կարող է կիրառել անհատական սակագնի համեմատ ավելի ցածր սակագին (միջնորդավճար):

31. Միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով, իսկ արտարժույթով արտահայտված միջնորդավճարները՝ տվյալ գործարքի կատարման պահի համար Բանկի կողմից սահմանած տվյալ արժույթի վաճառքի փոխարժեքով:

32. ԱԱՀ-ով հարկվող միջնորդավճարները ներառում են նաև ԱԱՀ-ն:

33. Բանկը պատասխանատվություն չի կրում.

1) Հաճախորդի կողմից սխալ ցուցումների արդյունքում առաջացած հետևանքների համար,

2) կապի միջոցների անսարքության դեպքում առաջացած հետևանքների համար,

3) անհաղթահարելի ուժ ունեցող (ֆորս-մաժոր) իրավիճակների դեպքում առաջացած հետևանքների համար:

34. Ծառայությունների դադարեցման կամ ծառայությունից հրաժարվելու դեպքում վճարված միջնորդավճարները վերադարձման ենթակա չեն:

35. Հաճախորդի կողմից Հաշվի փակման դիմում ներկայացնելու դեպքում Բանկը փակում է Հաշիվը 1 (մեկ) Բանկային օրվա ընթացքում: Հաշվում առկա դրամական միջոցները վերադարձվում են Հաճախորդին նույն Բանկային օրվա ընթացքում՝ Հաճախորդի կողմից նախընտրած եղանակով (կանխիկ կամ անկանխիկ եղանակով՝ տվյալ Հաշվից փոխանցում կատարելու միջոցով՝ սույն կանոններով սահմանված կարգով): Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմնի կողմից ներկայացրած հայտի հիման վրա:

36. Առանց հաշվետիրոջ կարգադրության Հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացրած հայտի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաշվից դրամական միջոցների բռնագանձման մասին Բանկը հաշվետիրոջը տեղեկացնում է Հաշվի քաղվածքն ուղարկելու միջոցով, եթե Հաճախորդը մինչ այդ չի դիմել Բանկ և չի ստացել նշված տեղեկատվությունը:

37. Հաճախորդը տեղեկացված է, գիտակցում և ընդունում է, որ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ Բանկն իրավունք ունի Հաշվով իրականացվող գործառնությունների (փոխանցումներ և այլն) կատարման համար Հաճախորդից պահանջել տվյալ գործարքին վերաբերող և Բանկին անհրաժեշտ փաստաթղթեր և (կամ) տեղեկատվություն, ինչպես նաև մինչև դրանց ստացումը կասեցնել, մերժել Հաշվի սպասարկումը, այդ թվում՝ գործարքների իրականացումը: Հաճախորդն ընդունում է, որ նման դեպքը չի կարող համարվել Կանոնների կամ ՀՀ օրենսդրության խախտում, եթե նման փաստաթղթերի պահանջը ներկայացվել է Հաճախորդի կողմից անհրաժեշտ գործառույթի իրականացման հանձնարարականի ստացումից հետո 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում, Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթուղթը կարող է չընդունվել, չհամարվել պատշաճ փաստաթուղթ Բանկի կողմից և/կամ Բանկը կարող է պահանջել լրացուցիչ այլ փաստաթղթեր:

38. Հաճախորդը տեղեկացված է, գիտակցում և ընդունում է, որ Բանկում իր առկա և հետագայում բացվող Հաշիվներով կատարվող փոխանցումները, այդ թվում՝ բեռնափոխադրման գործունեության իրականացման նպատակով կատարվող փոխանցումները չունեն և չեն ունենա որևէ կապվածություն Իրանի Իսլամական Հանրապետության, Սիրիայի Արաբական Հանրապետության, Սուդանի Դեմոկրատական Հանրապետության, Կուբայի Հանրապետության և Հյուսիսային Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության հետ, ինչպես նաև այդ

փոխանցումները պետք է համապատասխանեն փոխանցման իրականացման պահին գործող միջազգային սահմանափակումներին և չխախտեն դրանք: Հաճախորդը հաստատում է նաև, որ սույն կետի առնչությամբ հետագայում առաջացող ֆինանսական կորուստների մասով Բանկը պատասխանատվություն չի կրում, և ամբողջ պատասխանատվությունը կրում է ինքը:

39. Հաճախորդը տեղեկացված է, գիտակցում և ընդունում է, որ Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից տրված վճարման հանձնարարականի կատարման դեպքում՝ շահառուի Բանկի կամ միջնորդ Բանկի կողմից լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու կամ փոխանցումը կասեցնելու, գումարները սառեցնելու կամ դրանք չփոխանցելու և դրա հետևանքով առաջացած Հաճախորդի ծախսերի, կորուստների և վնասների համար:

40. Սույն Կանոնների 37-րդ կետով նախատեսված դեպքերում՝ Բանկի կողմից յուրաքանչյուր անգամ պահանջվող փաստաթղթերը 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում չներակայացնելու դեպքում տվյալ գործարքի կատարումը դադարեցվում է և կարող է կատարվել նոր վճարման հանձնարարականի հիման վրա: Առանձին դեպքերում, կախված գործարքի առանձնահատկություններից և պահանջվող փաստաթղթերի տեսակից, սույն կետում նշված ժամկետը կարող է գերազանցել 1 (մեկ) Աշխատանքային օրը:

41. Հաճախորդը կարող է տնօրինել իր Հաշվին առկա միջոցները Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների սահմաններում՝ Հաշվի առնելով Կանոններով նախատեսված և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառված սահմանափակումները:

42. Հաճախորդի հաշվին անկանխիկ ձևով մուտքագրված գումարների դեպքում, Բանկն իրավունքի ունի առանց Հաճախորդի համաձայնության (անակցեպտ) և հանձնարարականի, գումարը հետ ուղարկել այն փոխանցողին, եթե՝

1) Բանկի կողմից՝ Հաճախորդին պահանջ ներկայացնելուց հետո առավելագույնը 20 (քսան) օրվա ընթացքում վերջինիս կողմից չեն տրամադրվել (կամ տրամադրվել են ոչ ամբողջական) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերը/տեղեկությունները,

2) սույն կետի 1) ենթակետում նշված ժամկետում փաստաթղթերը/տեղեկությունները ամբողջությամբ տրամադրվել են, սակայն տրամադրված փաստաթղթերի/տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում, Բանկի կողմից կայացվել է գումարը փոխանցողին հետ ուղարկելու մասին որոշում, ընդ որում, սույն ենթակետում նշված դեպքում գումարը կարող է հետ փոխանցվել ուղարկողին՝ Բանկի կողմից գումարի հետ փոխանցման մասին որոշումը կայացնելուց անմիջապես հետո:

43. Սույն Կանոնների 42-րդ կետում նշված դեպքերում գանձվում են միջնորդավճարներ՝ համաձայն Սակագների: Միջնորդավճարների գանձումն իրականացվում է 19-րդ կետով սահմանված կարգով:

44. Եթե Հաճախորդի Հաշիվը ենթակա է փակման 8-րդ կետի համաձայն, ապա 42-րդ

կետում նշված ժամկետը կիրառելի չէ և Հաճախորդը պարտավոր է համապատասխան փաստաթղթերը/տեղեկատվությունը ներկայացնել մինչև 8-րդ կետով սահմանված հաշվի փակման ժամկետը:

45. Հաճախորդի Հաշիվը կարող է սպասարկվել և տնօրինվել ոչ հաշվետեր անձի կողմից, որն ՀՀ օրենսդրության համաձայն Բանկում հաշվետիրոջ շահերը ներկայացնելու համար ունի համապատասխան լիազորություններ/լիազորագրեր: Լիազորագրի համաձայն, կարող են նաև բացվել Հաշիվներ և փոփոխվել Հաճախորդի տվյալները, եթե լիազորագրում հստակ նշված լինի Հաշիվ բացելու և Հաճախորդի տվյալները փոփոխելու իրավասության մասին:

46. Լիազորագիրն ընդունելի է (ըստ ստորև ներկայացված հերթականության) այն դեպքերում, եթե՝

1) Հաճախորդը Բանկ է ներկայացրել համապատասխան իրավասու անձի/մարմնի կողմից վավերացված լիազորագրի բնօրինակը, կամ

2) Լիազորագիրը տրվել է Բանկի տարածքում, կամ

3) Լիազորագիրն ուղարկվել է Առցանց հարթակների միջոցով (ոչ ռեզիդենտ Հաճախորդների դեպքում Հաճախորդը (նաև Սակագներով սահմանված «ՀՀ ոչ ռեզիդենտ» Հաճախորդների կազմի մեջ մտնող որոշակի չափանիշներին բավարարող Հաճախորդը) պետք է կցի նաև փոստային առաքանու անդորրագիրը և նշի, որ բնօրինակն ուղարկվել է Բանկ) կամ

4) Լիազորագիրն ուղարկվել է Բանկում գրանցված էլեկտրոնային փոստով և միաժամանակ՝ առաջին գործարքը կատարելիս, Բանկում պետք է առկա լինի Լիազորագրի բնօրինակը (կամ լիազորված անձը անձամբ է այն ներկայացրել Բանկ կամ Հաճախորդը այն ուղարկել է փոստային կապով, իսկ իր էլեկտրոնային նամակին կցել է փոստային առաքանու անդորրագիրը և նշել, որ բնօրինակն ուղարկվել է Բանկ),

5) Բանկի ներքին իրավական ակտերով կարող են նախատեսվել Լիազորագրի ընդունման այլ հնարավոր եղանակներ և դեպքեր,

6) Իրավաբանական անձ Հաճախորդների կողմից տրված լիազորագրերը ընդունելի են, եթե տրված են նման իրավասություն ունեցող անձի կողմից:

47. Հաշվի բացման համար Լիազորագրի վավերացում (նոտարի կամ հաճախորդի երկրի օրենսդրությամբ սահմանված այլ նման իրավասություն ունեցող անձի/մարմնի կողմից) չի պահանջվում՝

1) ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ Հաճախորդների դեպքում, եթե լիազորագիրը ներկայացնում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը,

2) ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ Հաճախորդների դեպքում, եթե լիազորված անձը ներկայացնում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի/տնօրենի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

3) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ Հաճախորդների դեպքում, եթե լիազորագիրը տրվում է

Բանկի տարածքում Բանկի աշխատակցի ներկայությամբ,

4) Բանկի ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել լիազորագրի վավերացում (նոտարի կամ հաճախորդի երկրի օրենսդրությամբ սահմանված այլ նման իրավասություն ունեցող անձի/մարմնի կողմից) չպահանջելու այլ դեպքեր:

48. ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ Հաճախորդների Հաշիվների բացման համար, բացառությամբ սույն մասի 47-րդ կետում նշված դեպքերի, պահանջվում է լիազորագրի վավերացում՝ նոտարի կամ Հաճախորդի երկրի օրենսդրությամբ սահմանված այլ նման իրավասություն ունեցող անձի/մարմնի կողմից, ինչպես նաև լիազորագիրը պետք է հաստատված լինի միջազգային համաձայնագրերով սահմանված ընթացակարգով:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

49. Բանկը չի կատարում Հաճախորդի հանձնարարականը, եթե այն թերի է լրացված, նրանում առկա են սխալներ, ջնջումներ, հաշվում առկա միջոցները չեն բավարարում փոխանցումը կատարելու համար, Հաճախորդի կողմից չեն ներկայացվել փոխանցումը կատարելու համար Բանկի կողմից պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև, եթե բացակայում են Կանոններով նախատեսված անհրաժեշտ պայմաններից որևէ մեկը:

50. Վճարման հանձնարարականի ընդունման և կատարման համար սահմանվում է հետևյալ ժամանակացույցը.

	Վճարման հանձնարարականների ընդունում և կատարում			
	Ընդունում	Կատարում*	Ընդունում	Կատարում*
ՀՀ դրամ	Մինչև ժամը 15:30	Նույն Բանկային օրը	Ժամը 15:30-ից հետո	Հաջորդ Բանկային օրը
ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի	Մինչև ժամը 16:00	Նույն Բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ Բանկային օրը
Այլ արժույթ	3 Բանկային օրվա ընթացքում			

* Մինչև 50,000 ԱՄՆ դոլարով և 50,000 եվրոյով փոխանցումների դեպքում, որոնց կատարման օրը թղթակից բանկի երկրում ոչ աշխատանքային է, փոխանցման արժութավորման ամսաթիվը /valuedate/ կտեղափոխվի հաջորդ Բանկային օրը, իսկ 50,000 ԱՄՆ դոլարը, 50,000 Եվրոն գերազանցող և ՌԴ ռուբլով փոխանցումների դեպքում՝ փոխանցումը կկատարվի հաջորդ Բանկային օրը:

Առանձին դեպքերում, երբ պահանջվում է փոխանցման հետ կապված լրացուցիչ փաստաթղթեր/տեղեկատվություն, վճարման հանձնարարականը ենթակա է կատարման դրանք

ներկայացնելուց հետո: Սույն պարբերությամբ սահմանված դեպքերում վճարման հանձնարարականի կատարման ժամկետը կարող է գերազանցել սույն աղյուսակում նշված ժամանակահատվածը, սակայն ոչ ավել, քան 40-րդ կետում նշված ժամկետն է:

51. ՀՀ դրամով «Շտապ» պայմանով փոխանցումները ՀՀ այլ բանկեր կատարվում են նույն Բանկային օրը՝ վճարման հանձնարարականը մինչև ժամը 15:45-ը ներկայացնելու դեպքում: Տվյալ ծառայությունը հասանելի չէ հեռահար սպասարկման համակարգերի միջոցով կատարվող գործարքների համար:

52. Բանկը հանձնարարականը չկատարելու, այդ թվում՝ լրացուցիչ փաստաթղթեր/տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտության մասին Հաճախորդին տեղեկացնում է ոչ ուշ, քան հանձնարարականի ընդունմանը հաջորդող Բանկային օրը: Վճարման հանձնարարականի չկատարման դեպքում Բանկը նշում է նաև չկատարման պատճառները:

53. Հաճախորդի գործարքի հետ կապված դիմումները քննարկվում են Բանկի իրավական ակտերով սահմանված կարգով:

54. Հաճախորդի կողմից տրված վճարման հանձնարարականով փոխանցված գումարի հետ վերադարձի դեպքում Բանկը այդ մասին հնարավոր կապի միջոցներով տեղեկացնում է Հաճախորդին:

55. Հաճախորդի որևէ Հաշվին ուղղված միջոցները մուտքագրվում են Հաճախորդի հաշվին ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ Բանկային օրը, եթե թերություններ և անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերվելու դեպքում՝ դրանք շտկվելուց անմիջապես հետո:

56. Բանկը Հաճախորդի հաշվի մնացորդի դիմաց կարող է վճարել տոկոսներ՝ Սակագներով սահմանված տոկոսադրույքի չափով:

57. Հաշվի գումարի նկատմամբ տոկոսները հաշվեգրվում են գումարը մուտքագրելու օրվանից մինչև այն Հաճախորդին վերադարձնելու կամ Հաճախորդի Հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

58. Յուրաքանչյուր օրվա գործարքների վերաբերյալ Բանկը Հաճախորդի պահանջով վերջինիս կտրամադրի Հաշվի/Հաշիվների քաղվածք, որը համարվում է հաստատված, եթե Հաճախորդը, ստանալով քաղվածքը, վերջինիս հետ կապված դիտողությունները գրավոր ձևով չի ներկայացրել Բանկին՝ քաղվածքի տրամադրման/ուղարկման օրվանից 5 (հինգ) Բանկային օրվա ընթացքում:

59. Հաճախորդը հանձնարարում է Բանկին առանց իր հանձնարարականի և համաձայնության անակցեպտ կարգով գանձել և ստացողներին փոխանցել իր որևէ հաշվին սխալմամբ փոխանցված/հաշվեգրված կամ իրեն չհասցեագրված (այդ թվում՝ օրենքի խախտմամբ), սխալմամբ չելքագրված կամ Բանկի գործողությունների արդյունքում Հաճախորդի կողմից անհիմն ձեռբերված գումարները: Սույն կետով նախատեսված դեպքերում Սակագներով սահմանված

միջնորդավճարների գանձումն իրականացվում է սույն Կանոնների 19-րդ կետի համաձայն:

60. Բանկի պահանջի դեպքում՝ Հաճախորդի կողմից պետք է լրացվի Հայտարարություն՝ գործարքի իրական շահառուի, ինչպես նաև իր հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ:

61. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

62. Հաշվի քաղվածքները տրամադրվում են Հաճախորդին առնվազն երեսնօրյա պարբերականությամբ՝ Հաճախորդի նախընտրած տարբերակով.

1) էլ. փոստի միջոցով, կամ
2) առձեռն՝ Բանկի տարածքում, կամ
3) փոստով:

Ընդ որում, առձեռն ստացման եղանակն ընտրելու դեպքում Հաճախորդը պարտավոր է նույն տեղեկատվության ստացման համար ընտրել ևս մեկ տարբերակ՝ փոստային կամ էլեկտրոնային: Հաճախորդի կողմից սույն պահանջի կատարման մերժման դեպքում ընտրված է համարվում փոստային եղանակը:

63. Հաշվի բացման և սպասարկման պարտադիր պայման է հանդիսանում Բանկին էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրումը:

64. Բանկը պարտավոր չէ հաշվետիրոջը Հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ Հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

65. Բանկը պարտավոր է տրամադրել Հաշվի առկայության, մնացորդի և շարժի վերաբերյալ և/կամ այլ տեղեկանքներ ոչ ուշ, քան Հաճախորդների կողմից համապատասխան դիմումը Բանկ ներկայացնելուն հաջորդող 5 (հինգ) Բանկային օրվա ընթացքում, ընդ որում, Հաշիվների մնացորդի և շարժի վերաբերյալ տեղեկանքը Բանկը տրամադրում է Հաճախորդին տեղեկանքի տրամադրման օրվան նախորդող օրերի համար կամ տրամադրման օրվա դրությամբ՝ նշելով տրամադրման կոնկրետ ժամը:

66. Հաշվի քաղվածքը ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում հաշվի հետ կապված գործառնություններում անճշտություններ հայտնաբերելու դեպքում Հաճախորդը Բանկին կարող է ներկայացնել բողոքարկում: Նշված ժամանակահատվածում բողոքարկումները չստանալու դեպքում Բանկը քաղվածքը համարում է ընդունված: Բողոքարկումը ներկայացվում է Բանկին գրավոր դիմումի տեսքով: Սահմանված ժամկետում ստացված բողոքարկման դիմումը Բանկն ընդունում է կատարման՝ իրականացնելով տեղական և միջազգային վճարային համակարգի կանոններով սահմանված համապատասխան գործողությունները:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՇՎԻ ՓԱԿՄԱՆ ԿԱՄ ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

67. Հաշվի սպասարկումը կարող է դադարեցվել և պայմանագրային հարաբերությունները լուծվել՝ Հաճախորդի դիմումի համաձայն՝ 1 (մեկ) Բանկային օր առաջ Բանկին տեղեկացնելու և հաշիվներում առկա միջոցները զրոյացնելու դեպքում կամ Բանկի նախաձեռնությամբ՝ Կանոններով կամ Բանկի իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

68. Բանկի նախաձեռնությամբ Հաշիվը կարող է փակվել կամ կասեցվել՝

1) եթե օրացուցային 1 (մեկ) տարվա և ավել ժամանակահատվածում հաշվով գործառնություններ չեն կատարվել և հաշիվների մնացորդը չի գերազանցում 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամը (կամ համարժեք արտարժույթը), ընդ որում, Հաշվի փակման դեպքում գանձվում է միջնորդավճար Հաշվում առկա մնացորդի չափով: Գանձված միջնորդավճարը վերադարձման ենթակա չէ: Սույն դրույթը չի տարածվում այն Հաճախորդների վրա, ովքեր Բանկում ունեն մեկից ավելի Հաշիվներ և այդ Հաշիվներից գոնե մեկով նշված ժամանակահատվածում կատարվել են գործառնություններ, ունեն ավանդ (այդ թվում՝ նաև պարտատոմս) և վարկային պարտավորություններ (այդ թվում նաև տրված երաշխավորություններ),

2) եթե հերթական վճարման օրվա դրությամբ Հաշիվներին առկա միջոցները բավարար չեն Հաշվի սպասարկման միջնորդավճարը գանձելու համար,

3) եթե Հաճախորդի կողմից խախտվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով սահմանված սահմանափակումները՝ համաձայն Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ, կամ կատարվել է նման խախտման փորձ կամ Բանկի մոտ կասկածներ կան Հաճախորդի կողմից իրականացվող կամ նախատեսված գործարքների վերաբերյալ և Հաճախորդը Բանկի պահանջով չի ներկայացնում բավարար ապացույցներ նման կասկածները բացառելու համար,

4) եթե Հաճախորդը չի ներկայացնում Բանկի կողմից պահանջված գործարքը հավաստող փաստաթղթերը/տեղեկատվությունը,

5) եթե Բանկի պահանջը (ծանուցումը) ստանալու օրվանից, պահանջում (ծանուցման մեջ) նշված ժամկետում Հաճախորդը չի ներկայացրել իր վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը/տվյալները/փաստաթղթերը, այդ թվում՝ ԱՄՆ հարկատու լինելու վերաբերյալ,

6) եթե Հաճախորդի կողմից կամ օգտին իրականացվող գործարքներում (ներառյալ ստացվող փոխանցումներ) օգտագործվել են Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված տվյալներից ու տեղեկատվությունից տարբերվող տվյալներ ու տեղեկատվություն,

7) եթե Բանկի մոտ առկա է հիմնավոր կասկած, որ Բանկի ծառայություններից օգտվելը Հաճախորդի համար ունի բացառապես կամ առավելապես Բանկի ռեսուրսները (մարդկային, ժամանակային, նյութական) ծախսելու/վատնելու, Բանկին նյութական վնաս պատճառելու,

իրավունքի չարաշահմամբ անձնական՝ այլ մատուցվող ծառայության բնույթից չբխող օգուտներ քաղելու նպատակ,

8) եթե Հաճախորդի մասնակցությամբ Բանկում, այլ առևտրային բանկերում, ֆինանսական և/կամ ոչ ֆինանսական այլ կազմակերպություններում, ինչպես կազմակերպությունների, այնպես էլ դրանց հաճախորդների նկատմամբ կատարվել է զեղծարարություն կամ զեղծարարության փորձ կամ առկա է հիմնավոր կասկած դրա վերաբերյալ,

9) Պայմանագրով/համաձայնագրով, սույն Կանոններով նախատեսված դրույթները չպահպանելու դեպքերում,

10) Սակագներով նախատեսված դեպքերում,

11) Բանկի իրավական ակտերով սահմանված այլ դեպքերում, որի մասին Բանկը Հաճախորդին կծանուցի Հաճախորդի կողմից ընտրված ծանուցման եղանակով,

12) այլ դեպքերում պայմանագրային հարաբերությունները կարող են լուծվել Բանկի պահանջով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

69. Բանկը թույլատրում է Հաճախորդի կողմից Հաշվի տնօրինումը (ապակասեցնում է Հաշվի օգտագործումը) 68-րդ կետով նախատեսված Հաշվի սպասարկումը կասեցնելու հիմքերի վերանալու դեպքում:

70. Հաճախորդն ընդունում է, որ Բանկի կայքում հրապարակված Բանկի կողմից Հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և նրանց հետ հարաբերությունների կառավարման վերաբերյալ ընթացակարգում նախատեսված դեպքերում և կարգով, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված այլ դեպքերում Բանկն իրավունք ունի Հաճախորդին դասակարգել որպես անցանկալի հաճախորդ և միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին վերջինիս ծանուցելով հաղորդակցման՝ Հաճախորդի կողմից ընտրված եղանակով: Սույն կետով սահմանված իրավունքից օգտվելու դեպքում Հաճախորդի Հաշվին առկա մնացորդը վերջինս կարող է ստանալ՝ մոտենալով Բանկի ցանկացած մասնաճյուղ: Հաճախորդը, ստորագրելով Օֆերտան, ընդունում է, որ Բանկը սնանկության վարույթն ավարտվելու դեպքում իրավունք ունի դադարեցնել սնանկության վարույթի շրջանակներում վերջինիս անվամբ բացված սնանկության հատուկ հաշվի սպասարկումը՝ լուծելով Պայմանագիրը:

71. Սնանկության վարույթի ավարտից հետո սնանկության հատուկ հաշվին մնացորդի առկայության դեպքում Հաճախորդի հաշվի մնացորդը փոխանցվում է համապատասխան արժույթով Հաշվին, այդ թվում՝ Բանկի կողմից՝ անակցեպտ կերպով, իսկ նույն արժույթով Հաշվի բացակայության դեպքում՝ Հաճախորդի ցանկացած արժույթով այլ Հաշվին, ընդ որում՝ փոխարկման համար հիմք է ընդունվում փոխանցման պահին Բանկում տվյալ արժույթի անկանխիկ փոխարկման համար գործող փոխարժեքը: Հաճախորդի անվամբ Բանկում այլ Հաշիվների բացակայության դեպքում Հաշվի մնացորդը փոխանցվում է վերջինիս անվամբ բացված տարանցիկ հաշվին, որը Հաճախորդը կարող է ստանալ՝ մոտենալով Բանկի ցանկացած մասնաճյուղ:

ԳԼՈՒԽ 7. ՀԵՌԱՎԱՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

72. Բանկը Հաճախորդի դիմում-հայտ/օֆերտա լիազորագրի հիման վրա Հաճախորդին կարող է տրամադրել նաև Բանկ-Հաճախորդ համակարգ՝ (IDBusiness համակարգ), որն Ինտերնետի https://online.idbank.am/ կայքէջի միջոցով Հաշվի սպասարկում իրականացնելու համար նախատեսված ծրագրային և ապարատային միջոցների ամբողջություն է, ինչի օգնությամբ իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթերի ձևավորումը, դրանց՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացումը, ուղարկումը, ստացումը և իսկության ստուգումը:

73. Էլեկտրոնային փաստաթուղթը Բանկ-հաճախորդ համակարգի միջոցով էլեկտրոնային տեսքով ձևավորված փաստաթուղթն է, որը վավերացված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

74. Էլեկտրոնային թվային ստորագրությունը (ԷԹՍ)՝ Հաճախորդի ինքնագիր ստորագրության անալոգն է, որը գեներացվում է Մուտքանունի, Գաղտնաբառի և Գաղտնաբանալու (առկայության դեպքում) կամ Համակարգ մուտք գործելու մեկանգամյա թվային ծածկագրի միջոցով և օգտագործվում է Բանկ ուղարկվող էլեկտրոնային փաստաթուղթը հաստատելու, ստորագրելու և ուղարկելու համար: Բանկ-Հաճախորդ համակարգի միջոցով էլեկտրոնային փաստաթղթի ստացումը հանդիսանում է բավարար և անհրաժեշտ պայման այն ԷԹՍ-ով վավերացված համարելու համար:

75. Բանկը Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրումը հավաստում է դիմում–հայտ օֆերտայի/լիազորագրի ընդունում (ակցեպտ) նամակի միջոցով, որն ուղարկվում է Հաճախորդի Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեին (էլեկտրոնային եղանակով Հաճախորդին ուղարկելուց բացի, Հաճախորդի ցանկության դեպքում կարող է տրամադրվել նաև առձեռն):

76. Հաճախորդի դիմում-հայտ/օֆերտա լիազորագիրը և դիմում-հայտ/օֆերտա լիազորագրի ընդունում (ակցեպտ) փաստաթղթերը, սույն Կանոնները միասին հանդիսանում են Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրման և սպասարկման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրման և սպասարկման պայմանագիր):

77. Ներկայացնելով Բանկ-Հաճախորդ համակարգից օգտվելու դիմում-հայտ օֆերտա/լիազորագիր, Հաճախորդը ընդունում է իր և Բանկի ստորև սահմանված իրավունքները և ստանձնվող պարտականությունները.

1)Բանկը պարտավորվում է՝

ա. Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրման և սպասարկման պայմանագրի կնքման օրվանից 2 (երկու) Աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին տրամադրել Բանկ–Հաճախորդ համակարգի Մուտքանունը, Գաղտնաբառը և Գաղտնաբանալին (առկայության դեպքում) կամ Համակարգ մուտք գործելու մեկանգամյա թվային ծածկագիրը՝ համաձայն օֆերտայում նշված օգտվողների իրավասությունների:

բ. Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրման և սպասարկման պայմանագրում նշված Մուտքանունը, Գաղտաբառը և Գաղտնաբանալին կամ Համակարգ մուտք գործելու մեկանգամյա թվային ծածկագիրը տրամադրել Օֆերտայում նշված էլ. փոստի հասցեի և/կամ հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

գ. Ընդունել Բանկ–Հաճախորդ համակարգով Հաճախորդի ուղարկած էլեկտրոնային հանձնարարականները, եթե պահպանված են Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրման և սպասարկման պայմանագրով սահմանված դրույթները:

դ. Կասկածելի տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում անհապաղ դադարեցնել հաշվարկները և այդ մասին հայտնել Հաճախորդին:

2)Բանկն իրավունք ունի՝

ա. Տեղի ունեցած տեխնիկական խափանումների և այլ խոչընդոտող հանգամանքների առկայության դեպքում անորոշ ժամկետով միակողմանիորեն դադարեցնել էլեկտրոնային փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության փոխանցումների իրականացումը՝ այդ մասին ծանուցելով Հաճախորդին: Ընդ որում, սույն կետով նախատեսված դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդին պատճառված վնասների համար:

բ. Վաղաժամկետ լուծել Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրման և սպասարկման պայմանագիրը և դադարեցնել ծառայությունները, եթե Հաճախորդը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

գ. Կասեցնել, չկատարել կամ հետաձգել Բանկ-Հաճախորդ համակարգով ստացված հանձնարարականի կատարումը կամ կիրառել այլ սահմանափակումներ, եթե առկա են հիմնավոր կասկածներ, որ էլեկտրոնային փաստաթուղթը չի տրվել Հաճախորդի կողմից կամ Հաճախորդը չի պահպանել Բանկ-Հաճախորդ համակարգի օգտագործման պայմաններով սահմանված անվտանգության կանոնները կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

դ. Մերժել սահմանված գործառնական օրվա ժամերից հետո կամ ոչ աշխատանքային օրերին (ներառյալ՝ շաբաթ օրերին) Բանկ–Հաճախորդ Համակարգով կատարված արտարժույթի փոխարկման գործարքներն, ընդունել ի կատարումն հաջորդ Աշխատանքային օրը կամ Բանկի ներքին ակտերի պահանջների հիման վրա մերժել գործարքը:

ե. Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրման և սպասարկման պայմանագրից բխող բոլոր տեսակի ծանուցումները կատարել Բանկ-Հաճախորդ համակարգի միջոցով կամ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստով, ինչն էլ կհամարվի Բանկի կողմից Հաճախորդին ուղարկված պատշաճ ծանուցում:

3)Հաճախորդը պարտավորվում է՝

ա. Առաջին անգամ համակարգ մուտք գործելուց փոխել Գաղտնաբառը,

բ. Դադարեցնել Բանկ–Հաճախորդ համակարգի շահագործումը և այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին, եթե՝

I. կասկածներ են առաջացել գաղտնաբառի հրապարակման կամ երրորդ անձին տրամադրման մասին, կամ տեղի է ունեցել գաղտնաբառի հրապարակում կամ տրամադրում,

II. թղթային/էլեկտրոնային կրիչը կորել է կամ կասկածներ կան, որ կրկնօրինակվել է երրորդ անձի կողմից,

III. տեղի է ունեցել փոփոխություն Հաճախորդի կողմից լիազորված անձանց կազմում, որոնց իրավունք էր վերապահված իրականացնել Բանկ-Հաճախորդ համակարգի շահագործումը:

Ընդ որում, Հաճախորդի կողմից սույն կետով նախատեսված պարտավորության կատարումն ինքնին չի կարող դիտվել որպես Բանկ-Հաճախորդ համակարգի չթույլատրված օգտագործման ռիսկի փոխանցում Բանկին:

գ. Ապահովել Բանկ-Հաճախորդ համակարգի Մուտքանունի Գաղտնաբառի, և Համակարգ մուտք գործելու մեկանգամյա թվային ծածկագրի գաղտնիությունը և ձեռնարկել միջոցներ դրանք և Գաղտնաբանալին երրորդ անձնանց հասանելի չդարձնելու համար: Չլիազորված կրկնօրինակումից խուսափելու նպատակով՝ չօգտագործել դրանք այլ՝ անվտանգություն չապահովող համակարգիչների վրա:

դ. Այն դեպքերում, երբ նույն համակարգչով աշխատում են այլ անձինք, հետևել, որ չառաջանա web-էջը պատճենելու հնարավորություն:

ե. Կատարել Բանկի կողմից մատուցված ծառայությունների համար վճարումներ՝ համաձայն Բանկի կողմից սահմանված սակագների և դրույքաչափերի, որոնց կարելի է ծանոթանալ Բանկի ինտերնետային կայք էջում՝ https://idbank.am/business/accounts/account-opening-and-maintenance/business-bank-account/ հասցեում:

4)Հաճախորդն իրավունք ունի.

ա. Մինչ Բանկի կողմից Բանկ–Հաճախորդ համակարգով տրված հանձնարարականի կատարումը՝ դիմել հանձնարարականը փոխելու կամ չեղարկելու համար:

բ. Դիմել Բանկին արգելափակելու իր մուտքը Բանկ-Հաճախորդ համակարգ սահմանված կարգով՝ տեխնիկական և ծրագրային հնարավորությունների սահմաններում:

78. Ներկայացնելով Բանկ-հաճախորդ համակարգի տրամադրման դիմում-հայտ/օֆերտա լիազորագիր, Հաճախորդն ընդունում է և լիովին գիտակցում է, որ՝

1)Համակարգի աշխատանքի ժամերը սահմանվում են սույն Կանոնների 50-րդ կետով նշված ժամանակացույցին համապատասխան, բացառությամբ արտարժույթի փոխարկման գործարքների,

2)իր կողմից սույն Կանոններով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով Հաճախորդի կրած վնասների ռիսկն ամբողջությամբ կրում է Հաճախորդը, որի համար Բանկը պատասխանատվություն չի կրում,

3)սույն կետով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Բանկը և Հաճախորդը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

79. Բանկը պարտավորվում է.

1) Հաճախորդի անունով բացել համապատասխան հաշիվ/հաշիվներ՝ Կանոններով սահմանված ժամկետում՝ նախատեսված փաստաթղթերի ամբողջական ներկայացման դեպքում:

2) Հաճախորդի հաշիվներով գործառնություններն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով, Սակագներով սահմանված կարգով:

3) Ապահովել Հաճախորդի հաշիվներով իրականացվող գործառնությունների գաղտնիությունը:

4) Հաշիվների մասին տեղեկություններ տրամադրել Հաճախորդի և նրա կողմից լիազորված անձին, անհրաժեշտության դեպքում նաև այլ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5) ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված լիազորությունների շրջանակներում անվերապահորեն, ժամանակին և ճշգրիտ կատարել Հաճախորդի կողմից տրված վճարման հանձնարարականները:

6) Հաճախորդի հաշիվներում միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս գրել Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ և հերթականությամբ:

7) Հաճախորդի հաշվից առանց Հաճախորդի հանձնարարության անվիճելի կարգով գումարներ դուրս գրել ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոններով նախատեսված կարգով և դեպքերում:

80. Հաճախորդը պարտավորվում է.

1) Բանկի համար ընդունելի եղանակով Բանկ ներկայացնել Հաշիվների բացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև պատշաճ կարգով և ամբողջական լրացված դիմում (Բանկի կողմից սահմանված ձևով):

2) Վճարահաշվարկային փաստաթղթերը ներկայացնել Բանկ՝ լրացված համապատասխան ձևով:

3) Վճարել Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց Սակագներով կամ պայմանագրային հիմունքներով, եթե Կանոնների կատարման ընթացքում նման վճարումներ առաջանան:

4) Իր և իր հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկատվության փոփոխության դեպքում՝ ներկայացնել արդի տեղեկատվություն:

Ընդ որում, սույն կետով նախատեսված պարտավորության չկատարումը Բանկի կողմից

պարզվելու դեպքում՝ Կանոններով նախատեսված գործառույթները Բանկի կողմից կարող են չկատարվել՝ մինչև արդի տեղեկատվության տրամադրումը:

ԳԼՈՒԽ 9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

81. Սույն Կանոններով իրենց վերապահված պարտավորությունների չկատարման (ոչ պատշաճ կատարման) դեպքում՝ համապատասխանաբար Բանկը կամ Հաճախորդը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրության համապատասխան:

82. Բանկը պատասխանատու չէ Հաճախորդի կողմից Բանկին ցանկացած հարթակով, այդ թվում՝ հեռավար սպասարկման համակարգով, ներկայացված/ուղարկված փաստաթղթերում, ներառյալ՝ Հաճախորդի կորպորատիվ փաստաթղթերում, ներկայացված դիմումներում/օֆերտաներում, վճարման հանձնարարականներում, համաձայնություններում, լիազորագրերում նշված տեղեկությունների հավաստիության համար: Բանկը իր հետ իրավահարաբերություններում որպես որոշման կայացման և պայմանագրեր կնքելու իրավասու անձ հիմք է ընդունում Հաճախորդի կողմից ներկայացված անձանց որոշումները և չի կրում պարտականություն վերստուգելու որոշումների, իրավասու անձանց/մարմինների վերաբերյալ Հաճախորդի ներկայացված տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ 10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

83. Սույն Կանոններով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար՝ թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Հաշվի բացման և սպասարկման դիմում-հայտի և/կամ Բանկ-հաճախորդ համակարգից օգտվելու դիմում-հայտ/լիազորագրի ընդունումից (ակցեպտ) հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կանոններով սահմանված պարտավորությունների կատարումը:

ԳԼՈՒԽ 11. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

84. Սույն Կանոններով նախատեսված պայմանների իրականացման նպատակով՝ թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը պարտավորվում են իրենց գործունեության ընթացքում խստորեն համապատասխանել բոլոր այն կիրառելի իրավական ակտերին, որոնք արգելում են հանրային կամ մասնավոր գործիչների շրջանում կոռուպցիան, փողերի լվացումը, ահաբեկչության ֆինանսավորումը:

85. Բանկը և Հաճախորդը հավաստում են, որ տեղյակ են այն մասին, որ ՀՀ օրենսդրությունը և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններն արգելում են փողերի լվացումը կամ դրան աջակցելը, ահաբեկչության հետ կապ ունեցող անհատների և կազմակերպությունների հետ գործարքները և ֆինանսական միջոցների ու աջակցության տրամադրումը:

86. Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը պարտավորվում են ձեռնարկել և իրականացնել անհրաժեշտ և ողջամիտ քայլեր ու միջոցներ կոռուպցիան, փողերի լվացումը, ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու և կանխելու համար:

87. Բանկը և Հաճախորդը հայտարարում են, որ ըստ իրենց ունեցած տեղեկությունների՝ իրենց օրինական ներկայացուցիչները, գործակալները և ցանկացած այլ անձինք, ովքեր ներգրավված են սույն պայմանագրային հարաբերությունների իրականացմանը կամ որևէ ձևով ազդում են որոշումների կայացման վրա, ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն առաջարկում, չեն տալիս, չեն համաձայնում տալ դրամական միջոցներ կամ համանման արժեք, որպես հավելավճար կամ նվեր, որևէ անձի կամ ընկերության, այդ թվում՝ Կառավարության որևէ ներկայացուցչի կամ աշխատակցի, քաղաքական կուսակցության որևէ ներկայացուցչի, քաղաքական մանդատի որևէ թեկնածուի, ինչպես նաև որևէ պետության, գործակալության կամ հասարակական կազմակերպության կամ որևէ միջազգային հասարակական կազմակերպության ներկայացուցչության անունից օրենսդրական, վարչական կամ դատական գործառույթներ կատարող ցանկացած անձի՝ նպատակ ունենալով նրանց կոռումպացնել և/կամ խրախուսել գործելու իրենց գործառույթներին և գործունեությանը անհամապատասխան, որպեսզի իրենց համար ձեռք բերեն կամ պահպանեն որևէ գործարք կամ առավելություն ստանան առևտրային գործունեության ընթացքում:

88. Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը տեղեկացված են, որ իրենց գործունեությունը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին և հավաստում է, որ իրենց հարաբերությունների ընթացքում և դրա արդյունքում շրջակա միջավայրին ոչ թույլատրելի վնաս չի պատճառվի:

89. Սույն Կանոններով նախատեսված գործառույթների իրականացման ընթացքում թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը պարտավոր են պահպանել բոլոր կիրառվող օրենքներն ու կանոնները, որոնք արգելում են ռասսայական, կրոնական, մաշկի գույնի, ազգային, տարիքային, սեռական կամ հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը:

90. Բանկը, հավատարիմ լինելով իր առաքելությանը, պահպանելով ամենաբարձր էթիկական և կարգավորող չափանիշները՝ պատասխանատու գործունեություն է իրականացնում և երաշխավորում է, որ ո՛չ Բանկը, ո՛չ էլ Բանկի ծառայությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն օժանդակում կիրառելի միջազգային պատժամիջոցների և/կամ սահմանափակումների խախտմանը/շրջանցմանը:

91. Բանկը, լինելով միջազգային ֆինանսական համակարգի պատասխանատու

մասնակից, միևնույն ժամանակ առավել բարձր գնահատելով և պաշտպանելով հաճախորդների շահերը, անվտանգությունը և նրանց գործունեության անընդհատությունը՝ հետևում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, Եվրոպական Միության, Միացյալ Թագավորության, Միացյալ Նահանգների և այլ միջազգային պատժամիջոցներին և/կամ սահմանափակումներին:

92. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ պատժամիջոցների քաղաքականությունն արգելում է հաճախորդների ցանկացած գործունեություն, որը կխախտի կիրառելի պատժամիջոցները և/կամ սահմանափակումները: Նման գործողությունների արդյունքում կմերժվեն փոխանցումների/գործարքների իրականացումը, ինչպես նաև Բանկը կարող է հրաժարվել այդ հաճախորդներին սպասարկելուց:

ԳԼՈՒԽ 12. ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

93. Բանկը Կանոնները և Սակագները (այդ թվում՝ լրացումներն ու փոփոխությունները) հրապարակում է Հաճախորդների համար հասանելի վայրերում և միջոցներով, մասնավորապես՝

1) Բանկի ինտերնետային կայքէջում՝ https://www.idbank.am/

2) Բանկի մասնաճյուղերում և Հաճախորդների սպասարկումն իրականացնելու համար նախատեսված այլ վայրերում առկա տեղեկատվական վահանակներում՝ տեղեկատվության տեղադրման միջոցով:

94. Սակագների և այլ անհրաժեշտ վճարների մեծությունների փոփոխությունները, ինչպես նաև սույն Կանոնների փոփոխությունները համարվում են ուժի մեջ մտած Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելուց և Հաճախորդին՝ իր կողմից նշված եղանակով ծանուցելուց՝

1) 15 (տասնհինգ) օր հետո՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման հանգեցնելու դեպքում, կամ

2) 7 (յոթ) Աշխատանքային օր հետո, սույն կետի 1) ենթակետում չնշված մնացած բոլոր դեպքերում՝ /Անհատ ձեռնարկատեր հանդիսացող Հաճախորդների դեպքում/, կամ

3) առնվազն 1(մեկ) օր հետո՝ իրավաբանական անձ հանդիսացող Հաճախորդների դեպքում:

95. Կողմերը ընդունում են, որ Սակագների և Կանոնների փոփոխությունները և լրացումները Հաճախորդի կողմից համարվում են ընդունված, եթե մինչև դրանց ուժի մեջ մտնելը Հաճախորդը Բանկին չի ներկայացրել Հաշվի պայմանագիրը լուծելու վերաբերյալ դիմում, բացառությամբ 96-րդ կետով նախատեսված դեպքերի:

96. Հաճախորդն ընդունում է, որ սույն Կանոնների ուժի մեջ մտնելուն նախորդող մեկ տարում Ոչ ակտիվ հաճախորդների հատկանիշներն ունենալու դեպքում Բանկն իրավունք ունի

գանձել Սակագներով սահմանված միջնորդավճարները սույն Կանոնների 19-րդ կետով սահմանված կարգով, իսկ հաշվին դրամական միջոցների բացակայության դեպքում՝ միակողմանի լուծել Պայմանագիրը: Հաճախորդն ընդունում է, որ սույն կետով սահմանված հետևանքները վրա են հասնում Կանոնների ուժի մեջ մտնելուց հետո 1 (մեկ) ամիս անց, իսկ սույն կետին համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի նշված ժամանակահատվածում լուծել Պայմանագիրը կամ իր հաշիվներով իրականացնել գործարքներ:

ԳԼՈՒԽ 13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

97. Սույն Կանոնների կատարման հետ կապված կողմերի միջև փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահությամբ, որոնք ի վիճակի են լավագույնս ապահովել իրենց նպատակի իրականացումը:

98. Հաշվի բացման և սպասարկման հարաբերություններից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական Համակարգի Հաշտարարին, որը Կողմերի միջև ծագած վեճը լուծում է «Ֆինանսական Համակարգի Հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից (կետը կիրառելի է Անհատ ձեռնարկատերերի հաշիվների դեպքում):

99. Սույն Կանոններից, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի միջև հաշվի բացման և սպասարկման կապակցությամբ առկա հարաբերություններից ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Երեսնօրյա ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերի լուծումն իրականացվում է ՀՀ օրենսդրության հիման վրա՝ ՀՀ դատական համակարգի միջոցով կամ օրենսդրությամբ սահմանված այլ տարբերակով, եթե Հաճախորդի հետ առկա է վեճերի լուծման արբիտրաժային համաձայնություն, իսկ նման համաձայնության առկայության դեպքում վեճերը լուծվում են համաձայն այդ համաձայնության:

100. Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը հավաստում են, որ հաշվի բացման պահին նրանց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքել կամ կատարել Կանոնները:

101. Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը հաստատում են նաև, որ Կանոնների կատարումը լիովին համապատասխանում է իրենց շահերին:

102. Սույն Կանոնների նպատակների իրականացման հետ կապված Բանկի և Հաճախորդի միջև բոլոր ծանուցագրերը, հարցումները կամ հաստատումներն ուղարկվում կամ տեղում կազմվում են գրավոր՝ պատշաճ կերպով և ստորագրվում են լիազորված անձանց կողմից:

103. Հաճախորդի հաշվին և դրա սպասարկմանն առնչվող տեղեկությունները հանդիսանում են բանկային գաղտնիք և ենթակա չեն հրապարակման՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

104. Սույն Կանոնների դրույթները մեկնաբանվում են դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով մյուս պայմանները, ամբողջական իմաստը և նպատակները, որոնցով առաջնորդվել են Բանկը և Հաճախորդը:

105. Եթե Կանոնների որևէ դրույթ ճանաչվում է անվավեր կամ դառնում է անկիրառելի, ապա այն պետք է վերանայվի գործող օրենսդրության շրջանակներում՝ Բանկի և Հաճախորդի մտադրությունները վերականգնելու նպատակով: Սույն Կանոնների որևէ դրույթի անվավերությունը կամ անկիրառելիությունը չի ազդում Կանոնների որևէ այլ դրույթի վավերականության կամ կիրառելիության վրա: Բանկը և Հաճախորդը համաձայնվում են չշահարկել Կանոնների որևէ դրույթի անգործադրելիությունը՝ Կանոններով սահմանված իրենց պարտականությունների կատարումից խուսափելու համար:

106. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Բանկի հետ հաստատված իրավահարաբերությունների ընթացքում իր կողմից տրամադրված հեռախոսահամարը Հաճախորդի՝ Բանկում գրանցված անձնական տվյալներից ենթակա է հեռացման հետևյալ դեպքերում.

1) Եթե երրորդ անձը Հաճախորդի՝ Բանկում գրանցված հեռախոսահամարից Բանկի պաշտոնական հեռախոսահամարին զանգահարելու միջոցով տեղեկացրել է, որ տվյալ հեռախոսահամարն իրեն է պատկանում, կամ

2) Եթե երրորդ անձը Բանկի պաշտոնական էլեկտրոնային հասցեների, մասնաճյուղերի և/կամ Կոնտակտային կենտրոնի միջոցով Բանկ է ներկայացրել բջջային կապի օպերատորի կողմից տրված տեղեկանք՝ ի հավաստում, որ տվյալ համարը պատկանում է իրեն:

107. Սույն կանոնների 106-րդ կետում նշված հիմքերն ի հայտ գալու մասին Բանկից տեղեկանալուց հետո 7 (յոթ) Աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդը պարտավորվում է այցելել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի և/կամ Բանկ-հաճախորդ համակարգի միջոցով ներկայացնել դիմում հեռախոսահամարի փոփոխություն կատարելու նպատակով, իսկ մինչ փոփոխություն կատարելը, Բանկը դադարեցնում է տվյալ հեռախոսահամարին տեղեկատվության տրամադրումը: Բանկի կողմից 106-րդ կետում նշված հիմքերի մասին տեղեկացնելու համար Հաճախորդի հետ կապ հաստատելու անհնարինության դեպքում նույն տեղեկատվությունն ուղարկվում է Հաճախորդի գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին:

108. Եթե 106-րդ կետում նշված հիմքերն ի հայտ գալուց հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում Բանկի աշխատակցին չի հաջողվում կապ հաստատել Հաճախորդի հետ և/կամ Հաճախորդի կողմից չի իրականացվում տվյալների թարմացում, ապա վերջինիս հաշիվները ենթակա են

արգելափակման: Հաճախորդի կողմից տվյալների թարմացում իրականացնելու դեպքում հաշիվներն ապաարգելափակվում են:

109. Սույն Կանոններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: